ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

ԿՈՆԴԱԿԸ ՏԵՂԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽՆԴՐՈՒՄ։—ԵՐԴՄԱՆ ԽՆԴԻՐԸ։

Կաթողիկոսական տեղակալի իրաւասութեան սահմանների խնդիրը իւր ամենաէական մասերում արդէն վճռւած պէտք է համարել, զոնէ որքանով որ այդ խնդիրը կարևորութիւն է ներկայացնում ներկայ ժամանակում։ Պրոֆէսոր Իւրի Գամբարեանի լօդւածը, տպւած տեղական «Նովոե Օբոզրենիե» ռուս թերթում համար 2606 եկաւ վկայելու խնդրի նախընթաց լօդւածումս արած քննութեան տեսակէտների և արած եզրակացութիւնների ճշդութիւնը։

Պրոֆ. Գամբարեանի լօդւածը, նոր նիւթ չը տալով տեղակալական խնդրի մասին, ներկայացնում է մի ուրիշ հետաքրքրութիւն։ Նա մի փայլուն դաս տուեց մեր տեղական մամուլի տրադիցիաներով գործող մասին, թէ ինչպէս կարելի է և պէտք է լաւ դատի պաշտպանութիւնը կապել մտածողութեան գիտնական խստութեան հետ մի կողմից, և մանաւանդ անաչառութեան հետ դէպի անձնաւորութիւնները՝ միւս կողմից։ Նշանակւած լինելով «Արձագանքի» համար, որ լարգելի գիտնականին իւր դատի կողմնակից էր համարում, նոյն այդ գիտնականը դաս տուեց «Արձագանքին», հասկացնելով որ այլ բան է դատել եղած նիւթերի հիման վերայ, և այլ բան՝ դատել «Արձագանքի» մարդկանց բերանացի վկայութիւնների հիման վերայ։ Եւ դեռ «Արձագանքը»,—տրտնջում է թէ, ռուսաց իրաւագէտը չեղւել է իւր սկզբնական համոզմունքից!

Տեղակալական խնդիրը նոր լուսաբանութեան կարօտ չը լինելով, այնուամենայնիւ տեղիք տուեց հետազօտութեան, թէ որքան ճիշդ է թէ կաթողիկոսները կոնդակներով նշանակել են տեղակալներ։ Ընթերցողները արդէն գիտեն ես ինչ նշանակութիւն եմ տալիս այդ դէպքում, քանի որ

Ներկայ սահմանադրութիւնով տեղակալի անձնաւորութիւնը անպատճառ կապուած է Սինոդի նախանդամի անձնաւորութեան հետ։ Այնպէս որ եթէ խիկարէս այդպիսի կոնդակներ գոյութիւն էլ ունենան, խնդրի լուծումը գործականապէս ոչնչով չէր փոխուի։ Ահա ինչու տեղակալի իրաւունքների խնդիրը ես հարկ համարեցի միանգամայն բաժանել կոնդակների խնդրից, կոնդակներ, որոնց գոյութեան վերայ այնքան պնդում էին այժմեայ տեղակալ սրբ. Սրեմիայէն տեղակալ չը ճանաչողները։ Բայց չը նայած այն բանին, որ ես ոչինչ նշանակութիւն չէի տալիս կոնդակներին այս դէպքում, հարկ համարեցի այնու ամենայնիւ անցեալ յօդուածումս կասկածել կոնդակների գոյութեան մասին։

Բանից դուրս եկաւ, որ ես իրաւունք ունէի կոնդակների գոյութիւնը կասկածի տակ ենթարկելու։ Այդ մասին արդարև մի թէ երկու յօդուածներ լոյս տեսան նաև պարբերական մամուլի մէջ, բայց ամենից արժանին է մի ձեռագիր գրուածք, որ այս րոպէին ձեռքիս տակն է և որը սկսում է այսպէս.

*«Ես քրքրեցի բոլոր այն պաշտօնական թղթերը, որ կարողացայ ձեռք բերել 1836-ից դէսը, այն է՝ Պոլոժենիայի հաստատուելուց յետոյ, իւրաքանչիւր կաթողիկոսի մահից յետոյ նշանակուել է Տեղակալ միշտ և հանապազ, առանց որ և է բացառութեան, Սինոդի օրագրութեամբ (*постановленіе*)։ Տեղակալ եղել է միշտ և առանց բացառութեան՝ Էջմիածնում ներկայ եղող Սինոդի անդամներից աւագագոյնը։ Յովհաննէս, Ներսէս, Մատթէոս, Գէորգ կաթողիկոսների մահից յետոյ եղել են տեղակալներ՝ Բարսեղ, Ղուկաս, Ալամդարեանց Յովհաննէս, Վեհապետեան Գէորգ, Մկրտիչ Բաբամեանց և Մակար, դարձեալ Մկրտիչ, դարձեալ Մակար և երրորդ անգամ Մկրտիչ եպիսկոպոս կամ արքեպիսկոպոսները։ Ոչ մի կոնդակի յիշատակութիւն չը կայ, այլ իւրաքանչիւր անգամ տեղակալը եղել է Սինոդի* ա ռ ա ն ձ ի ն օ ր ա գ ր ո ւ թ ե ա մ բ։ *Բոլոր տեղակալները կամ տեղապահները Սինոդում կրել են «Տեղակալ Ատենապետի» տիտղոսը, իսկ Սինոդից դուրս՝ «Տեղակալ, Տեղապահ, Տեղակալ Մայր-Աթոռոյ, Կաթողիկոսական կամ Հայրապետական Տեղակալ» տիտղոսները, առանց խտրութեան, թէ պաշտօնական և թէ ոչ պաշտօնական գրութիւնների մէջ։*

Հէնց որ 1882 թ-ին մեռնում է Գէորգ կաթողիկոսը, եթէ Մակարի իբր թէ ունեցած կոնդակը գոյութիւն ունենար, պէտք է որ նա լինէր ա ն մ ի ջ ա պ է ս *Տեղակալ։ Բայց ինչ ենք տեսնում. իսկոյն Սինոդում օրագրութեամբ Տեղակալ է հրատարակւում Մկրտիչ արքեպիսկոպոս Բաբամեանց, Սինոդի աւագագոյն անդամը։ Բայց Գէորգ կաթողիկոսը դեռ կենդանութեան ժամանակ առաջարկել էր Մակարին իբրև Սինոդի անդամ։ Հէնց որ Մակարի Սինոդի անդամութեան հաստատութիւնը գալիս է, Մակարը. իբրև աւագագոյն, աւելի աւագ քան թէ Մկրտիչ արքեպիսկոպոսը, գալով Էջմիածին, դառնում է Տեղակալ «օրագրութեամբ Սինոդի»,*

որի մէջ չի ասած թէ Մակարը Տեղակալ է, որովհետև կոնդակ ունի,— կոնդակի վիճատակութիւն չը կայ ոչ պաշտօնական քաղուածներում («Արարատ» ամսագրի) և ոչ օրագրութեան մէջ,—այլ միայն որովհետև այդպէս է պահանջում Պալաժենիան։ Վրայ է հասնում Ալեքսանդր III կայսեր թագադրութեան հանդէսը, Մակարը Մայր-Աթոռի կողմից իբրև ներկայացուցիչ գնում է Մոսկւա։ Սինոդը իսկոյն ժողովւում է և նորից օրագրութեամբ Տեղակալ է ճանաչում ներկայ աւագագոյն անդամին՝ Մկրտիչ արքեպիսկոպոսին։ Մակարը վերադառնում է Մոսկւայից, և ահա Սինոդը նորից օրագրութիւն է կազմում, որով տեղակալութիւնը անցնում է Մակարին։ Ընտրութիւններից վերջ, երբ Ներսէս Պատրիարքը ընտրւում է առաջին կաթողիկոսացու, Մակարը... թողնում է Էջմիածին և գնում իւր թեմը՝ Թիֆլիս։ Ահա Սինոդը նորից ստիպւած է օրագրութիւն կազմել և տեղակալութիւնը յանձնել Մկրտիչ արքեպ. Բաքամեանցին, որ և մնում է Տեղակալ մինչև Մակարի ընտրելը և օծելը։ Ահա այս տեղակալութեան ժամանակ է, որ Մկրտիչ արքեպ. արձակում է Նահապետեանին Ճեմարանի տեսչութիւնից և Մակարը իրաւունք չը համարեց բողոքել։

Կան զգացմունքներ որ անհատական են, կան որ ազգային են, կան որ կրօնական են, կան որ զուտ ճշմարտասիրութեան զգացմունքներ են։ Այդ բոլոր տեսակի զգացմունքները խառն են այն բանի մէջ, որ ես կ'անուանեմ Իզմիրեան գործ։

Եղելութիւնը սա է։ Թիֆլիսի Նահանգական դատարանում յունիս 12-ին քննւում էր մի գործ, որի համար կանչւած էր իբր վկայ ի միջի այլոց նաև պ. Գրիգոր Իզմիրեանցը։ Երդեցնելու համար ներկայ էր հայ քահանան, որին, սակայն, նախագահը առաջարկեց երդւեցնել հայ-լուսաւորչական վկաներին ռուսերէն լեզուով։ Քահանան առարկեց թէ հայոց բարձրագոյն հոգևոր իշխանութեան հրամանով արգելւած է հայ քահանային երդւեցնել ուրիշ լեզուով քան հայերէն։ Պր. Բրկովը այդ՝ պատճառով հեռացրեց հայ քահանային և առաջարկեց հայ վկաներին՝ երդւել իւր, այն է՝ նախագահի մօտ, օրէնքով սահմանւած կարգով։ Պր. Իզմիրեանցը առարկեց թէ, օրէնքով, ինքը իրաւունք ունի առաջարկել, որ հեռացրած քահանայի տեղը կանչւի մի ուրիշ քահանայ իւր դաւանութեան, և որ այդ պատճառով նա հրաժարւում է նախագահի մօտ երդւել։ Նախագահը պ. Իզմիրեանցի այդ վարմունքը ընդունում է իբրև անհնազանդութիւն նախագահի կարգադրութեանը, և այդ մտքով դանդատ է յարուցանում դատախազի կողմից հաչտարար դատաւորի մօտ պ. Իզմիրեանցի դէմ։

Եւ ահա յուլիսի 10-ին Թիֆլիսի III-րդ վիճակի հաչտարար դատարանում քննւում էր պ. Գ. Իզմիրեանցի գործը, ներկայութեամբ անդին բազմութեան։

Ինչի վերայ էր հիմնում դատախազը իւր մեղադրանքը պ. Իզմիրեանցի դէմ։ Պատժական օրինագրքի 29-երորդ յօդուածի վերայ։ Բայց բանից դուրս եկաւ որ այդ յօդուածը խօսում է միայն անհնազանդութեան մասին կ ա ռ ա վ ա ր չ ա կ ա ն և ո ս տ ի կ ա ն ա կ ա ն իշխանութիւնների կարգադրութիւնների դէմ։ Մինչդեռ դ ա տ ա ր ա ն ա կ ա ն իշխանութիւնը ոչ կառավարչական և ոչ էլ ոստիկանական իշխանութիւն է։ Եւ իրօք. Ռուսաց օրէնսգրքի 2-րդ հատորի 3-րդ մասի 12-րդ յօդուածը ասում է թէ ռուսաց պետութեան մէջ իշխանութիւնը բաժանւում է երեքի՝ կառավարչական (правительственная власть), ոստիկանական (полицейская власть) և դատարանական (судебная власть) իշխանութիւնների [1]։ Իզմիրեանցը, անհնազանդ գտնւելով դատարանական իշխանութեան, չէր կարող ուրեմն դատւել պատժական օրինագրքի 29-րդ յօդուածի հիման վերայ, որը խօսում է միմիայն կառավարչական ու ոստիկանական օրինական (законный) կարգադրութիւնների դէմ ցոյց տուած անհնազանդութեան մասին։

Իսկ այն յօդուածը, որը խօսում է երդման մասին, է՝ քրէական դատավարութեան կանոնադրութեան 715-երորդ յօդուածը (Статья 715 устава уголовнаго судопроизводства).

Բոլոր վերը բերած յօդուածները ի պաշտպանութիւն պ. Իզմիրեանցի դատի, վերցրած են նոյն ինքն պ. Իզմիրեանցի խօսքերից, որ նա արտասանեց հաշտարար դատաւորի դահլիճում յուլիսի 10-ի նիստում։ Եւ չը նայած որ պ. Իզմիրեանցը այնու ամենայնիւ մեղաւոր ճանաչւեց հաշտարար դատաւորի օգնականի կողմից և դատապարտւեց 25 ռուբլի տուգանքի, բայց նորա փաստաբանութիւնը այնու ամենայնիւ համոզեցուցիչ էր բոլոր նորա լսողների համար և ընթերցողների համար այն բոլոր ռուս թէ հայ թերթերի, որոնք տպեցին այդ նիստի արձանագրութիւնը։

Մի շատ բնաւորոշ միջնադէպք լուսաբանեց ամբողջ գործի տենդենցիան։ Պր. Իզմիրեանցը, իւր փաստաբանութիւնը սկսելուց առաջ, պահանջեց որ հաշտարար դատաւորը կարդայ նահանգական դատարանում պատահած դէպքի արձանագրութիւնը։ Եւ նա կարդաց։ Այդ արձանագրութեան մէջ ասւած է, թէ պ. Իզմիրեանցը, մերժելով դատարանի նախագահի կողմից երդումն ընդունելու, պահանջեց, որ նախագահը հրաւիրէ մի այլ քահանայ, որպէս զի նորանից, հայ քահանայից՝ ռուսերէն երդումն ընդունէ։

Պարոն Իզմիրեանցը բողոքեց դորա դէմ, ասելով թէ նա առաջարկել է նախագահին, որ եթէ սա կամենում է, հրաւիրէ մի այլ քահանայի,

---

1) Նկատենք, որ իշխանութիւնների այդ բաժանումը, որի անհրաժեշտութիւնը փայլուն կերպով ցոյց տւեց XVIII-րդ դարու հռչակաւոր հեղինակ Մոնտեսքիէօն, մէկն է այն էական յառաջդիմութիւններից, որ իրագործել են եւրոպական պետութիւնները։

որ նորանից երդումն ընդունէ, բայց ոչ թէ ռուսերէն, այլ հայերէն լեզուով։ Պր. Իզմիրեանցի այդ խօսքերի վերայ՝ հաշտարար դատաւորը վրայ բերեց թէ՝ այդ հանգամանքը գործի համար էական նշանակութիւն չի կարող ունենալ (обстоятельство это для дѣла существеннаго значенія имѣть не можетъ)։

Յայտնի է թէ հանգուցեալ Հայրապետը, Մակար կաթողիկոսը ինչ հրաման էր տուել բոլոր հայ-լուսաւորչական քահանաներին երդման մասին, իւր մահից քիչ ժամանակ առաջ։ Նա հրամայել էր որ հայոց քահանաները դատարաններում հայ վկաներին երդւեցնեն հայերէն լեզուով, թէ չէ՝ այդ քահանաները կարգալոյծ կ'անւեն։

Լրագրական քննադատութիւնը խնդրի մեր տեղական ամբողջ մամուլի մէջ՝ ոակայն թէ հայ թէ ռուս՝ ընդունեց բանակռուի ձև «Մշակ»-ի խմբագիր պ. Արծրունու և մի ինչ որ պ. Տոկարսկու մէջ, մէկը «Մշակ» լրագրում, միւսը՝ պաշտօնական «Կաւկազ» ռուս լրագրի ոչ-պաշտօնական մասում։ Ամենքին սակայն պարզ էր, որ Տոկարսկու գրութիւնը պէտք էր ընդունել իբր մի փորձ՝ եթէ ոչ արդարացնել Նահանգական դատարանի վարմունքը Իզմիրեանցի դէմ օրէնքների հիման վերայ, գէթ ազատել այդ վարմունքի տենդենցիան, նորա ամենքի համար լաւ տեսանելի աստառը համակրելի գոյներով դուրս բերելով։

Իբր թէ ինչ հարկ կայ որ լուսաւորչականը հայերէն երդւի իւր քահանայի մօտ, եթէ երկուսն էլ գիտեն ռուսերէն լեզուն, քանի որ երդումը (իբր թէ) կրօնական արարողութիւն չէ, այլ մեծ մասամբ քաղաքացիական ակտ է (гражданскій актъ)։ Կարծես եթէ քաղաքացիական լինի մի գործողութիւն, ուրեմն անհրաժեշտ հարկ կայ այդ գործողութիւնը կապել ռուսաց լեզուի հետ, և հայերէն լեզուով կատարած գործողութիւնը իբր կը կորցնի իւր քաղաքացիական բնաւորութիւնը՞ Իբր թէ հայերէն, վրացերէն, թուրքերէն արտասանած խօսքը կը լինի ոչ քաղաքացիական, բայց եթէ նոյն խօսքը արտասանւի ռուսերէնով՝ նա հէնց դորանով կը դառնայ քաղաքացիական։

Խնդիրը ինքն ըստ ինքեան շատ կարօտ է պարզ բացատրութիւնների, որովհետև մենք ամենքս հետաքրքրւած ենք այն մի բանում, որ երկրիս մէջ արդարադատութիւնը զոհ չը գնայ ծուռ հասկացած սկզբունքների և կամ զոհ չը գնայ յօգուտ այնպիսի շահերի, որոնք ոչինչ գործ չունին արդարադատութեան հետ։

Արդարադատութիւնը միմիայն մի միջոց ունի իւր գործը կատարելու համար—ճշմարտութիւն իմանալը։ Արդարադատութիւնը չի ճանաչում ոչ բացառիկ կրօն, ոչ բացառիկ լեզու, ոչ բացառիկ ազգութիւն։ Ճշմարտութիւնը երևան հանելու համար՝ նա ամեն միջոցի դիմում է, բացի ակնյայտնի անբարոյական և կամ անբարոյականացնող և մարդկային արժանապատւութեանը հակառակ միջոցներից։ Ճշմարտութիւնը խոստովանացնելու համար

կարելի է մէկին միայն հարց տալ—և դա բաւական կարող է լինել. միւսից ճշմարտութիւնը դուրս կորզելու համար բաւական չէ միայն հարց տալ, այլ նորանից պէտք է պահանջել որ աղնիւ խօսք տալ. երրորդից հարկ կայ պահանջելու, որ իւր ծնողների արեով կամ գերեզմանով երդւէ և երեսը խաչակնքէ. չորրորդին այդ բոլորն էլ բաւական չէ. նորան հարկաւոր է մի աւելի ևս խիստ փորձութեան ենթարկել. Եւ այսպիսով ահա գտել են, որ մարդկութեան ահագին մեծամասնութեան համար այդ ամենաարմատական միջոցը՝ քահանայի առջև, խաչով-աւետարանով ու Աստուծու ահեղ դատաստանի անունով երդւելն է։ Դա կրօնական երդումն է, որ ընդունել է նաև ռուսաց օրէնդրութիւնը բոլոր այն մարդկանց համար, որոնց կրօնը կամ եկեղեցին ընդունում է երդումը իբր սրբութիւն։

Արդ, հայոց լուսաւորչական Եկեղեցին ընդունում է երդումը, և ինչպէս է նա ընդունում.—միմիայն այն ձևով, ինչպէս այդ հաստատել են այդ Եկեղեցու պետերը՝ կաթողիկոսները, համաձայն այդ Եկեղեցու աւանդական կամ օրինական կարգերին։

Այդ ոչինչ չի նշանակում, եթէ հայոց լեզուով կատարուող երդումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի թարգմանութիւն ռուսերէնից։ Բայց դա մի թարգմանութիւն է, որը ընդունել է հայոց լուսաւորչական Եկեղեցին։ Այդ է գլխաւորը, որովհետև այդ հանգամանքն է գրաւականը, որ այդ երդման մէջ չկայ ոչ մի խօսք, որը ընդդէմ լինէր Հայաստանեայց Եկեղեցու վարդապետութեան, որն և դաւանում է հայ լուսաւորչականը։ Թէև մի թարգմանութիւն է նա, բայց նա հայ լուսաւորչականից ընդունւում է ոչ որպէս ռուսաց կրօնական երդում, այլ հայ լուսաւորչականի կրօնական երդում, իւր սեպհականը և ոչ օտարինը։

Նկատեցէք որ երդումն միմիայն կրօնական կարող է լինել։ Երբ ասում են երդումն, էլ հարկաւոր չէ աւելացնել կրօնական ածականը, որովհետև ոչ-կրօնական երդումն չի կարող լինել հէնց այնպէս, ինչպէս չի կարող լինել ոչ կրօնական մկրտութիւն։ Կարելի է վերացնել երդումն, բայց երդումը աշխարհական դարձնել չի կարելի։ Աշխարհական երդումն չկայ։ Երդւել խօսքը մի տերմին է, որի յատուկ նշանակութիւնը խօսքի հետ կապւած կրօնական ծիսակատարութիւններն են։ Նման քարոզ խօսքին, որը ընդունւած է ասել միմիայն այն ճառերի մասին, որ արտասանում են հոգևորականները, նիւթը աւետարանից վերցրած լինելով։ Աշխարհական մարդը կարող է քարոզ կարդալ, բայց աշխարհական քարոզ մի աբսուրդ է, անմտութիւն է։ Աշխարհական քարոզ չկայ և չի կարող լինել, որպէս չի կարող լինել աշխարհական երդումն, թէև աշխարհական մարդը կարող է նաև երդւեցնել։

Ինչ միտք ունի ներկայ խնդրի համար այն, թէ երդման մէջ քաղաքացիական տարր կայ և թէկուզ թէ երդման մէջ գերակշիռ է քաղաքացիական տարրը։ Խնդիրը սա է թէ երդումը ինքը կրօնական է թէ ոչ,

թէ չէ պսակի խորհուրդի մէջն էլ կայ քաղաքացիական տարր. բայց կարող է լինել արդեօք քաղաքացիական կամ աշխարհական պսակ? Ոչ երբէք. Պսակելը կրօնական արարողութիւն է և երբէք պսակել չի կարելի աշխարհական ձևով, այլ կարելի է միայն ամուսնանալ քաղաքացիական ձևով. Կարելի է վերացնել պսակը, բայց աշխարհականացնել նորան չի կարելի. Քաղաքական ամուսնութիւնը նոյնքան լարդելի է որքան և կրօնականը. բայց պսակի խորհուրդը միմիայն կրօնական ձև է պահանջում և ոչ աշխարհական. Նոյնն է և երդումը, որ իւր ձևի համար միայն կրօնական է. Խլեցէք ձևը—նա դադարում է կրօնական լինելուց, և նա դադարում է երդում կոչելուց. Մեզանում օրհնում են և տունը, և առանձին բնակարանը, և մրգերը, երբ նոքա սկսում են հասունանալ. կարելի է օրհնել տալ անդամ առանձին գործողութիւններ կամ գործեր, որպէս մի գործի սկզբնաւորութիւն՝ լինի նա առևտրական, դործարանական թէ պատերազմական. Եւ այն ընդունուած ձևը կրօնական է, չնայած որ կրօնականին համապատասխան կան նաև աշխարհական ձևեր՝ օրհնելու համար. մեր, աշխարհականներիս չնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները մի գործի յաջողութեան համար, անդամ այդ մաքով ճաշկերոյթներ սարքելը և կենացներ խմելը և այլն ինչ բաներ են, եթէ ոչ աշխարհական ձևեր նոյն զգացմունքները արտայայտելու համար, ինչ զգացմունքներ որ արտայայտուում են, երբ Աստծու օգնութիւնն են կանչում գործի յաջողութեան համար, այսինքն երբ դիմում են օրհնութեան քահանայի կողմից այն կրօնի և եկեղեցու, որը դաւանում է մարդս. Այդ օրհնութիւնը պարտաւորիչ չէ ոչ ոքի համար. կամքի բան է՝ ով կ'ուզէ օրհնել կը տայ. բայց ով օրհնել է տալիս—նա պարտաւոր է ընդունել նաև օրհնելու ընդունուած ձևը և դորա հետ կապուած ծէսը.

Այս օրինակները ես բերի միայն ցոյց տալու համար, որ մի որ և իցէ կրօնական արարողութեան մէջ կարող է լինել և կամ անպատճառ կայ մի բան, որ աշխարհական ձևերով էլ արտայայտել կարելի է. բայց որ այդ շատ հասկանալի բանը այնուամենայնիւ մեզ իրաւունք չի տալիս ասել թէ այն արարողութիւնը կրօնական չէ. Ոչ, և հազար անդամ ոչ. կրօնականը մնում է կրօնական, որ ունի իւր յատուկ բովանդակութիւնը և իւր բովանդակութեանը պատշաճեցրած արտաքին ձևը—ծէսը.

Երդման մէջ քաղաքացիական բնաւորութիւն տեսնել ցանկացողները մատնանիշ են անում նաև այն բանի վերայ, որ երդումը քաղաքացիական հետևանքներ ունի, օրինակ՝ սուտ երդողը պատժւում է ոչ կրօնական, այլ քրէական օրէնքներով. Կատարեալ սուիսութիւն! Եթէ դա մի ապացոյց լինի, նաև մկրտութիւնը պէտք է որ քաղաքացիական ակտ համարուի, որովհետև մկրտութեան վկայական տուողը և կամ մանաւանդ չը մկրտուած ռուսը, ռուսաց օրէնքներով, և պատժւում է

ն քաղաքացիական շատ թանկագին իրաւունքներից զրկւում է։ Նոյնը և ամուսնացած բայց չը պսակւած մարդը։

Խնդրի այս մասը միանգամայն պարզած համարելով, ես կ'անցնեմ այն բանին, թէ կարելի է արդեօք վ ե ր ա ց ն ե լ ե ր դ ու մ ը թէ ոչ։

Երդումը ինչու համար է? Նորա համար է, որ մարդուս վերայ գործենք ամենամեծ ճնշումը՝ ճշմարտութիւնը խոստովանացնելու համար։ Կան մարդիկ, որոնց վերայ երդումն էլ չի ազդում. բայց օրէնսդիրը մեղաւոր չէ, որ մարդկութիւնը չի տուել աւելի ազդու միջոց մարդկանց ստիպելու համար որ ճշմարտութիւնը խոստովանեն։ Իսկ է, եղել են ժամանակներ, երբ նոյն իսկ քրիստոնէական մի եկեղեցի, որպիսին է հռոմէական կաթոլիկ եկեղեցին՝ երդումից զատ, կասկածւածին ամենասարսափելի մարմնական պատիժների էր ենթարկում՝ ճշմարտութիւնը խոստովանեցնելու համար։ Դա ինկւիզիցիան էր, որի էութիւնը ամենքին յայտնի է։ Բայց յետոյ բանից երևաց, որ այդ մարմնական զարհուրելի տանջանքները չեն հասնում իրանց առաջադրած նպատակին, և որ զարհուրած և ահ ու դողի մէջ ընկած մարդը խոստովանում է ոչ թէ ճշմարտութիւնը, այլ այն, ինչ հաճելի է դատաւորին, ուրեմն շատ անգամ և մեծ մասամբ սուտ է խոստովանում՝ տանջանքից ազատւելու համար։ Այդ և ուրիշ շատ փորձերը բերել են լուսաւորւած մարդկութիւնը այն համոզմունքին, որ երդումը եղած միջոցներից այն է, որ միաժամանակ և զօրեղ է և համեմատաբար ամենից բարոյական։ Ահա հէնց այդ պատճառով է, որ երդումը ճշմարտութիւնը խոստովանեցնելու ամենալաւ միջոցն է ճանաչւած։

Բայց ում համար արդեօք? Չէ՞ որ կան մարդիկ, որոնց համար երդումը բոլորովին աւելորդ է ճշմարտութիւնը ասելու համար. չէ՞ որ շատերի համար բաւական է մի պարզ հարց և նոքա ճշմարտութիւնը կը խոստովանեն. կան և շատերը, որոնց համար արդէն բաւական է եթէ միայն խոստանան կամ ա զ ն ի ւ խ օ ս ք տան թէ ճշմարտութիւնը կը խոստովանեն։

Այո, այդ բոլորը ճիշդ է. այո, ճիշդ է որ բարձր բարոյական զգացմունքներով մարդիկ կան, որոնց համար երդումը աւելորդ է։ Բայց այդ բոլորը ամենեւին չի ապացուցանում, որ դատարանում այդպիսի մարդիկ չը պէտք է երդում տան եթէ միայն իրանց կրօնը այդ թոյլ է տալիս։ Եւ ինչու նոյն իսկ այդպիսիների համար պարտաւորիչ պէտք է լինի երդումը։ Այն պարզ պատճառով, որ դատաւորը չի կարող իմանալ, թէ ով է ներկայ եղող վկաներից ճշմարտախօսը և ով է նա, որի վերայ միայն երդումը կարող է ազդել։

Երդումը սակայն ազդող միջոց է ճշմարտութիւնը խոստովանեցնելու միայն այն ամենքի համար, որոնց դաւանած կրօնը ընդունում է երդումը։ Այն կրօնները, որոնք հերքում են երդումը կամ մեղք են համարում Աստուծոյ և ահեղ դատաստանի անունով երդւել [illegible] է որ այդ կրօն-

ների հետևողներից անկարելի է երդում պահանջել։ Երդումը սուրբ բանի տեղ չը դնելով, այդ կրոնների հետևողների վերայ երդելը ազդեցութիւն չի կարող ունենալ։ Ահա ինչու ռուսաց նոր օրէնսդրութեան հիմնադիրները ոչ միայն չեն պահանջում, այլ և չեն ընդունում երդումն այն կրոնի մարդկանցից, որը երդումն չի ընդունում, օրինակ ռուսաց սուբբոտնիկ կոչած աղանդաւորներից։

Բայց ինչպէս է այս բոլորը կապւում արդեօք լեզուի խնդրի հետ։ Եթէ, արդարադատութեան շահերի համար, երդումը պարտաւորիչ պէտք է լինի բոլոր այն կրօնների հետևողների համար, որոնք երդումն ընդունում են, պարտաւորիչ պէտք է լինի արդեօք նաև որ այդ երդումը այս կամ այն լեզուով լինի, թէ ոչ։

Ահա մի հարց, որը ժողովրդի ստուար մեծամասնութեան համար ամենևին խնդիր չի կարող լինել. ահա մի հարց, որի դիմաց ժողովրդի ահագին մեծամասնութիւնը կը կանգնի սառած, այն աստիճանի նրան խորթ կը թուի մի այդպիսի հարցմունք։ Բայց և այնպէս հարցը դրուած է և որ գլխաւորն է՝ այդ հարցից խնդիր է շինուած դատարանական բարձրագոյն շրջաններում։ Խնդիրը շատ ծանրակշիռ է. այդ հասկանում է և գիտէ ամեն հասկացող մարդ։ Երկրիս արդարադատութիւնը մեծապէս հետաքրքրուած պէտք է լինի թէ այդ խնդրին բարձր շրջաններում ինչ ուղղութիւն պէտք է տրուի։ Եւ մամուլի պարտքն է, հնարաւոր եղածին չափ, խնդրի պարզելուն նպաստել։ Անուրանալի է որ այդ խնդրի այսպէս կամ այնպէս վճռելը բարձրագոյն տեղում առանց հետևանքների չը պէտք է անցնի արդարադատութեան գործի վերայ մեր երկրում, և մանաւանդ մեր երկրում, ուր ուստ երդումը ժամանակիս ցաւերից մէկն է վաղուց ի վեր։

Ինչպէս է դրուած հարցը արդեօք? Տեղական «Նովոե Օբոզրենիե» ռուս թերթը տեղեկացնում է այդ մասին այսպէս՝ «Մենք լսել ենք, որ Թիֆլիսի Նահանգական դատարանի նախագահը դիմել է արդարադատութեան մինիստրութեանը այս հարցի պարզաբանութեան համար թէ ռուսերէն խօսող օտարազգիները պէտք է արդեօք դատարաններում երդեցնեն բացառապէս ռուսերէն լեզուով։ (...должныли иновѣрцы, говорящіе по-русски, приводиться въ присягѣ въ судахъ исключительно на русскомъ языкѣ)։

Պարզ է, որ այստեղ երդման այն ֆորմուլան, որ կարդացւում է վկաներին՝ դատարաններում հայ քահանայի կողմից ընդունւում է լոկ որպէս թարգմանութիւն ռուսերէնից։ Դա սխալ է. հայ-լուսաւորչականի ընդունած երդումը ամենևին ռուսաց երդումը չէ, որքան էլ երկուսի իմաստը և խօսքերը նոյնը լինեն։ Հայի ընդունած երդումը միմիայն այն է, որ ընդունել է Հայաստանեայց եկեղեցին։

Դուք կ'ասէք՝ իսկ եթէ վկայն հայերէն չը գիտէ։ Եթէ հայերէն չը գիտէ. և վկայն պահանջում է որ հասկանայ քահանայի բոլոր ասած-

ները՝ նրան պէտք է օգնէ մի թարգման, բոլորովին այնպէս, ինչպէս թարգմանն է օգնում դատաւորին, երբ վերջինս ռուսերէն չը գիտցող մի հայի, թուրքին կամ վրացուն, ֆրանսիացուն, անգլիացուն հարցմունքներ է տալիս և նոցա ցուցմունքները թարգմանում ռուսերէն։

Դորանով բաւարարութիւն արուած կը լինի նրանց, որոնք հայերէն չը գիտեն։ Բայց ես բոլորովին հակառակ եմ համարում կրօնական երդման իմաստին, եթէ հայ-լուսաւորչականին, թէկուզ ռուսերէն գիտցող հային՝ հարկադրեն որ ռուսերէն երդուէ։ Ես աւելի հեռուն եմ գնում և պնդում, որ այն հոգեբանական դերը ի նկատի ունենալով որ կատարում է երդումը դատական գործերում, պէտք է արգելել հայ-լուսաւորչականին ռուսերէն երդուել, բոլորովին այնպէս, ինչպէս արգելւում է առհասարակ երդուելը այն մարդկանց որոնց կրօնական դաւանանքը չի ընդունում երդումը։ Այդ է պահանջում դատարանական շահը։

Եթէ երդումն պահանջողը արդարադատական շահն է,—և այդ այդպէս էլ է,—այն ժամանակ ես ոչ միայն չեմ հասկանում թէ ինչու պէտք է իշխանութիւնը ստիպէ հայ լուսաւորչականին, մահմեդականին, և այլն երդուել ռուսերէն, այլ և չեմ հասկանում թէ ինչպէս կարելի է ազատութիւն տալ երդուողին որ սա երդուէ իւր ընտրած լեզուով, թէ կուզ նորա ընտրած լեզուն լինի իւր ամենալաւ գիտցածը կամ իւր մանկութեան լեզուն։ Եթէ երդման գործում այն, ինչ ազդում է մարդու վերայ, հէնց նորա կրօնական մասն է, այսինքն այն, ինչ կապում է մարդուս իւր կրօնի և եկեղեցու հետ, և եթէ եկեղեցու լեզուն որոշուած է, էլ ինչպէս կարելի է թոյլ տալ որ երդուողը ինքը ընտրէ այն լեզուն, որով նա պէտք է երդուէ։ Հէնց երևակայեցէք մի մարդ, որը խստակրօն հայ լուսաւորչական է, բայց որը վրացախօս է. Հեշտ կարելի է երևակայել, որ մի այդպիսի մարդ կ՚ուզենայ վրացերէն՝ երդուել, եթէ մտադիր է ստել։ Դատարանում նա ով սուտ վկայութիւնից պէտք է վնասուի, ամենայն իրաւամբ կարող է պահանջել որ այդ հայ-լուսաւորչական վրացախօսը հէնց հայերէն բնագրի վերայ երդուէ։ Իսկ որ այդ արարողութիւնից յետոյ հարկ կը դատուի այդ հայ-լուսաւորչականին վրացերէն բացատրել կատարուած արարողութեան իմաստը—այդ խօսք երդման գործին չի կարող վնասել։

Ես շատ լաւ գիտեմ, որ լեզուին նշանակութիւն չը տուողները իրանց արդարացնում են նորանով թէ հաւատը յատուկ լեզու չունի, և որ Աստուած Աստուած է, կոչել նա Աստուած, Dieu, Gott, Богъ թէ Ալլահ։ Այդ ճշմարիտ է, և ճշմարիտ է ոչ միայն լուսաւորեալի համար, այլ և տգէտի համար. բայց բանը նրանումն է, որ երդումը միայն հաւատի բան չէ. հայ-լուսաւորչականը հրէայի հետ մի հաւատի է՝ միաստուածութեան մէջ, բոլոր քրիստոնեաների հետ մի հաւատի է՝ աւետարանի մէջ, բոլոր քրիստոնեայ ուղղափառների հետ մէկ է՝ Հաւատամքի մէջ, բայց և այնպէս հայ-լուսաւորչականը հրէական կրօնին չի պատկանում և նա չի պատկա-

նում կաթոլիկական, չի պատկանում լունական, չի պատկանում ռուսաց ուղղափառ եկեղեցիներին։ Հաւատը լեղու չունի, բայց եկեղեցին, իբր հաստատութիւն, ունի իւր ընդունած լեղուն կամ լեզուները։ Արևելեան ուղղափառ կրօնին պատկանում են և լոները և ռուսները. բայց այն ժամանակուանից երբ ռուսաց ուղղափառ եկեղեցին սկսեց կազմել լունական եկեղեցուց անկախ Եկեղեցի, ռուսաց Եկեղեցին ալ ես պարտաւոր չի համարում հետևել լունաց պատրիարքի կարգադրութիւններին, և, չը նայած որ կրօնները մէկ է, բայց որովհետև եկեղեցիները ջոկ են՝ երդումը կարող է ալ լինել՝ ռուսաց ուղղափառ եկեղեցուն պատկանողի համար։ Եւ լունաց պատրիարքը չի ալ ես երդման թուղթ շարադրում ռուսների համար, թէկուզ դա լինի և ռուսաց լեզուով։ Երդումը բոլոր քրիստոնեաների համար մէկ չէ, ալ նա առանձին-առանձին է ամեն մի քրիստոնէական եկեղեցու համար։ Հայ-լուսաւորչական եկեղեցու լեզուն հայերէն է, երդումն էլ հայերէն է և պէտք է լինի։ Երբ որ կը կազմուի հայ-լուսաւորչական մի ջոկ եկեղեցի դիցուք ռուսերէն լեզուով, այն ժամանակ միայն պարտաւորիչ կը լինի այդպիսի կրօնական հանդիսին պատկանողի համար երդուել ռուսերէն լեզուով։ Իսկ մինչև որ այդպիսի բան չը կայ—հայերէնը պարտաւորիչ կը լինի բոլոր հայ-լուսաւորչական թէ քահանաների և թէ այդ կրօնը դաւանողների համար։ Եւ իզուր չի հրամայում ռուսաց նոր օրէնսդրութիւնը առ 20 նոյեմբ. 1864 թուականի իւր 360-րդ յօդուածով թէ՝ վկաները երդուեցնում են իրանց եկեղեցու ծէսերով.

ԼՈՒՍԻՆԻ